Համալիր առաջադրանքներ Քաղաքացիական կրթության մեջ

2023

Օժանդակ ռեսուրս ուսուցիչների համար

Համալիր առաջադրանքներ Քաղաքացիական կրթության մեջ

Ռեսուրսը պատրաստված է USAID-ի Քաղաքացիական կրթության ծրագրի շրջանակներում

Համալիր առաջադրանքներ Քաղաքացիական կրթության մեջ

Օժանդակ ռեսուրս ուսուցիչների համար

Հեղինակ՝ Շալվա Մեկրավիշվիլի

Աշխատանքային խմբի ղեկավար՝ Մակա Բիբիլեիշվիլի

Խմբագիր՝ Ռիտա Բաինդուրաշվիլի

2023թ.

Ռեսուրսը պատրաստվել է ամերիկացի ժողովրդի աջակցությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Տվյալ ռեսուրսում պարունակվող ինֆորմացիայի և նրանում արծարծվող տեսակետների միանձնյա պատասխանատուն ձեռնարկի հեղինակներն են: Ռեսուրսը չի ներկայացնում PH international-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները։

Ցանկ

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N1 - Թափոնների տարանջատում (VII ԴԱՍԱՐԱՆ).....2
ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N2 - Ապատեղեկատվություն (VIII ԴԱՍԱՐԱՆ).....5
ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N3 - Վրաստանի պետական կառավարման ժողովրդավարության որակը (IX ԴԱՍԱՐԱՆ)..... 8
ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N4 - Վրաստանում քաղաքացիություն ստանալու և ապրելու օրինական հնարավորություններ (X ԴԱՍԱՐԱՆ) 21
ՀԱՄԱԼԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ N5 - Պատերազմական հանցագործություն (XI ԴԱՍԱՐԱՆ).....25

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N1- Թափոնների տարանջատում (VII ԴԱՍԱՐԱՆ)

ԹԵՄԱ. ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ			
Համալիր առաջադրանք (անվանում)	Թիրախային հասկացություն և ենթահասկացություններ	Թեմա	Հանգուցային հարց
Աղբարկղի օրագրի ստեղծում՝ թափոնների տարանջատման կարևորությունն ընդգծելու համար	Կայուն զարգացում կայուն էկոլոգիական զարգացում, թափոնների կառավարում	Թափոնների տարանջատում	Ինչպե՞ս օրագրում ներկայացնեմ աղբի տարանջատման կարևորությունը կայուն էկոլոգիական զարգացման տեսանկյունից
Երկարաժամկետ նպատակ Թիրախային հայեցակարգ և դրանով պայմանավորված կից հասկացություններ	Հարց/ենթահարցեր Թափոնների տարանջատում Ենթահասկացություններ. Կայուն էկոլոգիական զարգացում, թափոնների կառավարում	Հանգուցային հարց / հարցեր Ինչպե՞ս օրագրում ներկայացնեմ աղբի տարանջատման կարևորությունը կայուն էկոլոգիական զարգացման տեսանկյունից	Միջանկյալ ուսումնական նպատակ Համալիր առաջադրանքի պայման
Կայուն զարգացում Արդյունքներ. Բազային մակարդակ. 7, 10, 11 Միջին մակարդակ. 3 1. Ռեսուրսներ օգտագործելիս կարևոր է հաշվի առնել հասարակության շահերը և ապագայի հեռանկարը 2. Տեղական գործողություններն ունենում են գլոբալ հետևանքներ (օրինակ՝ շրջակա միջավայրի մասին հոգալը սկսվում է աննշան թվացող	I Փուլ. Համալիր առաջադրանքի ձևաչափ Քայլ 1. Ինչպե՞ս պետք է ցույց տամ իմ գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Ռեսուրս. • Պատրաստվող ապրանքի՝ օրագրի կազմման կարևորությունը, ի՞նչ է նշանակում օրագիր, ինչպե՞ս կազմենք օրագիր, ինչպե՞ս վարենք սեփական օրագիրը: • Օրագրի նմուշ (հատվածներ). Մարո Մաղաշվիլիի օրագիրը,_Մարո Մաղաշվիլիի օրագիրը (ամբողջական տեքստ),_Աննա Ֆրանկի օրագիրը Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին • Կարդացե՞լ ես, արդյոք, օրագիր: • Ի՞նչ ազդեցություն է թողել քո վրա օրագիրը: Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին • Ինչպե՞ս ստեղծեմ օրագիր:		Պատկերացրու, որ քո թաղամասում գտնվող աղբամանն ունի զգալու և մտածելու ունակություն: Այն մտահոգ է, որ մարդիկ իր մեջ ամեն տեսակի աղբ են նետում: Գիտի, որ առաջադեմ երկրներում մշակվել է աղբի տեսակավորման (տարանջատման) մշակույթը և այդ նպատակով օգտագործում են տարբեր գույների մի քանի աղբամաններ: Այն նաև անհանգստացած է, որ իր մեջ թափված չտեսակավորված թափոններն, ի վերջո թափվում են բնության ընդերքն ու աղտոտում շրջակա միջավայրը: Աղբարկղը

գործողություններից (օրինակ՝ աղբը		

գետնին չթափել, հրաժարվել պոլիէթիլենային տոպրակից)):		• Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ օրագիր ստեղծելու համար (ծանոթանամ օժանդակ նյութի հետ) • Ինչպե՞ս ընդգծեմ օրագրի առանձնահատկությունները:	որոշել է, որ իր մտքերն ու մտահոգությունները օրագրի տեսքով կփոխանցի, բայց նա ձեռքեր չունի ու գրել չի կարող: Դարձիր նրա վստահելի անձն ու կազմիր օրագիր: Օրագիրը/այն ներկայացնելու ժամանակ հստակ ներկայացրու. • Ինչո՞ւ մարդիկ պետք է տեսակավորեն աղբը (Կ.Պ. 1, 2); • Ինչպե՞ս կնպաստի աղբի տեսակավորումը պետության և հասարակության կայուն զարգացմանը, ի՞նչ օգուտներ կբերի ժողովրդին ու երկրին (Կ.Պ. 1, 2):
	II Փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակություն Քայլ 1. Ինչո՞ւ մարդիկ պետք է տեսակավորեն իրենց թափոնները (Կ.**Պ**. 1, 2); Ինչպե՞ս աղբի տեսակավորումը կնպաստի պետության և հասարակության կայուն զարգացմանը, ի՞նչ օգուտներ կբերի այն ժողովրդին ու երկրին (Կ.**Պ.**1, 2): Ռեսուրսներ. 1. Դպրոցական դասագիրք. VII դասարան, «Դիոգենե» հրատարակչություն, էջ 110, 116-119: 2. Կայուն զարգացումն ու դրա ասպեկտները: 3. Ինչո՞ւ չպետք է թափոններ նետենք բնության մեջ: 4. Թափոնների տեսակավորման անիմացիոն տեսանյութեր (անգլերեն). ամեն ինչ թափոնների վերամշակման մասին: Թափոնների վերամշակում երեխաների համար Թափոնների կառավարում		
	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Ի՞նչ վտանգներ է ներկայացնում հասարակության համար շրջակա միջավայրի աղտոտումը: • Որո՞նք են շրջակա միջավայրը աղտոտող թափոնների նվազեցման ուղիները: • Ինչպե՞ս են կառավարում աղբի թափոնները քաղաքակիրթ երկրներում: • Ինչպե՞ս կարելի է կիրառել այս պետությունների փորձը մեր երկրում:	
	Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս ներկայացնեմ օրագրում,թե ի՞նչ նշանակություն ունի աղբի	

		տեսակավորումը հասարակության համար:	
	III Փուլ. **Համալիր** առաջադրանքի շնորհանդես Ուսուցչի հարցեր, որոնք տրվելու են աշակերտների կողմից համալիր առաջադրանքի շնորհանդեսի ընթացքում. • Նկարագրիր, թե ինչպե՞ս է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: • Նկարագրիր, թե ինչ ապրանք ես ստեղծել: • Ո՞ր հարցին է առնչվել քո հանձնարարության թեման: • Բացատրիր, թե ինչո՞ւ ես կազմել օրագիր: Ո՞րն էր ասելիքդ: • Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստեղծած ապրանքն իսկապես օրագիր է: • Ըստ քեզ, ո՞ւմ պետք է հետաքրքրի քո ստեղծած համալիր առաջադրանքը և ինչո՞ւ: • Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: • Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե այժմ սկսեիր աշխատել առաջադրանքի վրա: • Կատարե՞լ ես, արդյոք, նման ձև կամ բովանդակություն ունեցող առաջադրանք: • Ըստ քեզ, ինչո՞վ է քո ապրանքը նման և ինչո՞վ տարբեր դասընկերներիդ աշխատանքից:		

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N2- Ապատեղեկատվություն (VIII ԴԱՍԱՐԱՆ)

ԹԵՄԱ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ			
Համալիր աշխատանք (անվանում)	Թիրախային հասկացություն և ենթահասկացություններ	Թեմա	Հանգուցային հարց
Լրագրողական էթիկայի խարտիա ուղարկվող բողոքի պատրաստում՝ հիմնված լրատվական դաշտում հայտնաբերված կոնկրետ ապատեղեկատվության հիման վրա[1]	Քաղաքացիական մասնակցություն՝ բողոք, բացահայտում	Ապատեղեկատվություն	Ինչպե՞ս կարող եմ բողոք կազմել հայտնաբերված ապատեղեկատվության մասին՝ Լրագրողական էթիկայի խարտիա ուղարկելու համար
Երկարաժամկետ նպատակ Թիրախային հասկացություններ և դրանցով պայմանավորված կից պատկերացումներ	Հարց/ենթահարցեր Ապատեղեկատվություն Ենթահասկացություններ. բողոք, բացահայտում	Հանգուցային հարց /հարցեր Ինչպե՞ս կարող եմ բողոք կազմել հայտնաբերված ապատեղեկատվության մասին՝ Լրագրողական էթիկայի խարտիա ուղարկելու համար	Միջանկյալ ուսումնական նպատակ Համալիր առաջադրանքի պայման
Քաղաքացիական մասնակցություն Արդյունքներ. Բազային մակարդակ. 8, 9, 12, 13 1. Ժողովրդավարական հասարակությունը քաղաքացիական հասարակություն է, որը բաղկացած է ակտիվ քաղաքացիներից 2. Քաղաքացիական մասնակցությունը հանրային կարիքների/երկրի մասին հոգալու միջոց է 3. Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով (սոցիալական	I Փուլ՝ Համալիր առաջադրանքի ձևաչափ. Քայլ 1. Ինչպե՞ս պետք է ցույց տամ իմ գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Դաս 1. Ռեսուրս. • Ինչպե՞ս գրել բողոք՝ Լրագրողական էթիկայի խարտիա ներկայացնելու համար: https://www.qartia.ge/ka/ganckhadebis-shetana • Հայտի նմուշ.		Ժամանակակից դարաշրջանի մարտահրավերներից մեկը ապատեղեկատվությունն է: Մարդիկ կեղծ տեղեկություններ են տարածում տարբեր նպատակներով: Ապատեղեկատվության դեմ պայքարի հիմնական զենքն այն բացահայտելն է և կեղծ տեղեկատվություն տարածողի դեմ օրինական միջոցներ կիրառելը: Այդպիսի գործիքներից է Լրագրողական էթիկայի խարտիան, ուր ցանկացած քաղաքացի կարող է բողոք ներկայացնել: Պատկերացրու, որ դու նույնպես որոշել ես մասնակցել ապատեղեկատվության դեմ պայքարում: Փնտրիր զանգվածային
	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Գրե՞լ ես, արդյոք, բողոք • Ի՞նչ հույզեր է առաջացնում բողոքը	
	Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս գրեմ բողոք • Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ բողոք գրելու համար	

		լրատվության միջոցներով տարածված

ծրագրերի կազմել-իրականացնելով, կամավորական աշխատանքով, փաստաբանությամբ, լոբբինգով) հոգ են տանում հանրային խնդիրների լուծման մասին: Միաժամանակ նրանք համագործակցում են միմյանց, հասարակական կառույցների, հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների հետ 4. Քաղաքացիական մասնակցության ժամանակ կարևոր է հաշվի առնել այլ անձանց շահերը 5. Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնի գործողությունները		• Ինչպե՞ս ընդգծեմ բողոքի առանձնահատկությունները (ձևակերպեմ փաստարկներ, պատրաստեմ նյութեր/ապացույցներ ներբեռնելու համար)	ցանկացած ապատեղեկատվություն և բողոք պատրաստիր այն տարածողի դեմ, որը կարող ես ուղարկել Լրագրողական էթիկայի խարտիա: Բողոքի/այն ներկայացնելու ժամանակ հստակ ներկայացրու. • Ինչո՞վ է կարևոր նման ակտիվությունդ երկրի ժողովրդավարական զարգացման համար (Կ.Պ. 1): • Ի՞նչ կարևորություն ունի հասարակության համար Լրագրողական էթիկայի խարտիայում կեղծ տեղեկատվություն տարածողի դեմ բողոք ներկայացնելը (Կ.Պ. 2, 3, 4): • Ինչո՞վ է քո գործողությունն արդարացի և ինչո՞ւ է անթույլատրելի տվյալ գործողությունն այս պարագայում (Կ.Պ. 5):
	II փուլ՝ Բարդ առաջադրանքի բովանդակությունը Քայլ 1. Ինչո՞վ է կարևոր քո նման ակտիվությունը երկրի ժողովրդավարական զարգացման համար (կ.պ. 1): Ի՞նչ կարևորություն ունի հասարակության համար Լրագրողական էթիկայի խարտիայում կեղծ տեղեկատվություն տարածողի դեմ բողոք ներկայացնելը (կ.պ. 2, 3, 4): Ինչո՞ւ է քո նման գործողությունն արդարացի և ինչո՞ւ է անթույլատրելի նման բռնի գործողությունն այս պարագայում (կ.պ. 5): Ռեսուրսներ: 1. Դպրոցական դասագիրք. VIII դասարան, «Դիոգենե» հրատարակչություն, էջ. 57-61 2. Լրագրողական էթիկայի խարտիայի սկզբունքները, 3. Քննված գործի և կայացված որոշման նմուշ, 4. Ապացույցների նմուշ, 5. Կայքէջեր, որտեղ հնարավոր է գտնել ապատեղեկատվության նմուշներ՝ https://mythdetector.ge/ka/ https://factcheck.ge/ka? https://mdfgeorgia.ge/geo/stories		
	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Ըստ նյութի՝ ո՞րն էր ապատեղեկատվության էությունը: • Ո՞ր հաստատություններին է դիմել Պատմության ուսուցիչը՝ ապատեղեկատվությունից պաշտպանվելու համար: • Ինչո՞ւ էր կարևոր և՛ ուսուցչի, և՛ հասարակության համար լրագրողին բացահայտելը և Խարտիա նրա դեմ բողոք ներկայացնելը: • Որքանո՞վ էր արդարացի Պատմության ուսուցչի արարքը:	

	• Հավելյալ ինչ խորհուրդ կտաք և՛ բողոքողին (ուսուցչին), և՛ ամբաստանյալին (լրագրողին):
Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ի՞նչ քայլեր է ձեռնարկել Պատմության ուսուցիչը լրագրողի կողմից իր մասին տարածած ապատեղեկատվությունից պաշտպանվելու համար:

III Փուլ. Համալիր առաջադրանքի շնորհանդես

Ուսուցչի հարցեր, որոնք տրվելու են աշակերտների կողմից համալիր առաջադրանքի շնորհանդեսի ընթացքում.

· Նկարագրիր, թե ինչպե՞ս է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:
· Նկարագրիր, թե ինչ ապրանք ես ստեղծել:
· Ո՞ր հարցին է առնչվել քո հանձնարարության թեման:
· Բացատրիր, թե ինչո՞ւ ես կազմել բողոքը Ո՞րն էր ասելիքդ:
· Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստեղծած ապրանքն իսկապես բողոք է:
· Ըստ քեզ, ո՞ւմ պետք է հետաքրքրի քո ստեղծած համալիր առաջադրանքը և ինչո՞ւ:
· Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս:
· Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե այժմ սկսեիր աշխատել առաջադրանքի վրա:
· Կատարե՞լ ես, արդյոք, նման ձև կամ բովանդակություն ունեցող առաջադրանք:
· Ըստ քեզ, ինչո՞վ է քո ապրանքը նման և ինչո՞վ տարբեր դասընկերներիդ աշխատանքից:

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N3- Վրաստանի պետական կառավարման ժողովրդավարության որակը (IX ԴԱՍԱՐԱՆ)

ԹԵՄԱ. **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ**			
Համալիր աշխատանք (անվանում)	Թիրախային հասկացություն և ենթահասկացություններ	Թեմա	Հանգուցային հարց
Ժողովրդավարության սկզբունքներին Վրաստանի պետական կառավարման համապատասխանության մասին հոդվածի պատրաստում	Ժողովրդավարություն Ժողովրդավարության սկզբունքներ	Վրաստանի պետական կառավարման ժողովրդավարության որակը	Ինչպե՞ս կարող եմ միջազգային ուսումնասիրությունների հիման վրա վերլուծել և հոդվածում ներկայացնել Վրաստանի պետական կառավարման համապատասխանությունը ժողովրդավարության սկզբունքներին
Երկարաժամկետ նպատակ Թիրախային հասկացություններ և դրանցով պայմանավորված կից պատկերացումներ	Հարց/ենթահարցեր Վրաստանի պետական կառավարման ժողովրդավարական որակը Ենթահասկացություններ. Ժողովրդավարական սկզբունքները	Հանգուցային հարց/ հարցեր Ինչպե՞ս կարող եմ միջազգային ուսումնասիրությունների հիման վրա վերլուծել և հոդվածում ներկայացնել Վրաստանի պետական կառավարման համապատասխանությունը ժողովրդավարության սկզբունքներին:	Միջանկյալ ուսումնական նպատակ Համալիր առաջադրանքի պայման
Ժողովրդավարություն (մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ) Արդյունքներ. Միջին մակարդակ 1, 2, 3, 4. 1. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց	I Փուլ՝ Համալիր առաջադրանքի ձևաչափ Քայլ 1. Ինչպե՞ս պետք է դրսևորեմ իմ գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Դաս 1. Ռեսուրս. • Պատրաստվող ապրանքի՝ հոդված գրելու նշանակությունը Հոդված http://www.rogor.ge/article_1103_rogor-davwerot-kargi-statia.html • Հետաքննական հոդվածի նմուշ Ժողովրդավարական վարկանիշի տեսանկյունից Վրաստանը 90-րդ տեղում է		Պատկերացրու, որ միջազգային հետազոտական կազմակերպության փորձագետ ես: Քո կազմակերպությունն ուսումնասիրում է, թե ողջ աշխարհի պետությունները որքանով են ժողովրդավարական: Այժմ քեզ հանձնարարվել է ուսումնասիրել Վրաստանի պետական կառավարման ժողովրդավարական որակը: Ուսումնասիրիր տրված

արժանապատվությամբ և իրավունքներով, 2. Անձն ունի քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կոլեկտիվ իրավունքներ. Վրաստանի Սահմանադրությունը և միջազգային փաստաթղթերը (հռչակագրեր, կոնվենցիաներ) ապահովում են այդ իրավունքների պաշտպանությունը: 3. Ժողովրդավարական հասարակության/պետության մեջ մարդու իրավունքները ամենակարեւոր արժեքն են: 4. Ժողովրդավարությունը հիմնված է հիմնարար սկզբունքների վրա (հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, իշխանությունների բաժանում, արդար ընտրություններ, պատասխանատվություն, ներառականություն, ոչ բռնի գործողություն, հանդուրժողականություն), առանց որոնց պաշտպանության ժողովրդավարական պետությունը չի կարող գործել:	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Կարդացե՞լ ես, արդյոք, հոդված: • Ինչպե՞ս է հոդվածն ազդել քո վրա:	տեղեկատվությունը, որի հիման վրա պարզիր, թե որքանով է քո պետությունը հիմնված դրանց վրա:
	Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս ստեղծել հոդված: • Ինչ քայլեր պետք է ձեռնարկեմ հոդված ստեղծելու համար (կարդացեք օժանդակ նյութը) • Ինչպե՞ս ընդգծեմ հոդվածի առանձնահատկությունները (կազմենք ծրագիր, վերնագրենք, ստեղծենք բանալի բառեր, գրենք ներածությունը, հիմնական ասելիքն ու եզրակացությունը)	Հետազոտության արդյունքները ներկայացրու հատուկ հոդվածում և ներկայացրու դասարանում: Հոդվածի/ շնորհանդեսի ժամանակ հստակ ներկայացրու. • Ինչպե՞ս է պետությունը պաշտպանում մարդկանց արժանապատվությունը, ազատությունը, հավասարությունը և քաղաքացիական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կոլեկտիվ իրավունքները (Կ.Պ. 1, 2, 3): • Որքանո՞վ են Վրաստանում պաշտպանված ժողովրդավարության սկզբունքները (Կ.Պ. 4):
	II Փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը Քայլ 1. Ինչպե՞ս է պետությունը պաշտպանում մարդկանց արժանապատվությունը, ազատությունը, հավասարությունը և քաղաքացիական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կոլեկտիվ իրավունքները (Կ.Պ. 1, 2, 3): Ռեսուրսներ. 1. Դպրոցական դասագիրք. X դասարան, «Դիոգենե» հրատարակչություն, էջ. 16-26, 40-41: 2. Վրաստանի Սահմանադրություն (երկրորդ գլուխ):		
	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Ի՞նչ իրավունքներ և ազատություններ է տալիս Վրաստանի Սահմանադրությունը քաղաքացիներին: • Ի՞նչ մեխանիզմներ է նախատեսում Վրաստանի Սահմանադրությունը մարդու իրավունքների պաշտպանության համար: • Ի՞նչ պատմություն է նախորդել Վրաստանի ժամանակակից Սահմանադրության ընդունմանը:	

Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ժողովրդավարության ո՞ր սկզբունքներն են առնչվում Վրաստանի Սահմանադրության առանձին հոդվածներին: (խմբավորենք, համապատասխանեցնենք, աղյուսակ ստեղծենք)	

Քայլ 2. Որքանո՞վ են Վրաստանում պաշտպանված ժողովրդավարական սկզբունքները (Կ.**Պ.** 4):

<u>Ռեսուրսներ.</u>

1. Վրաստանը՝ Freedom House-օն մանրամասն հաշվետվության մեջ
2. V-Dem-ի արդյունքները: 2021 թվականին Վրաստանում ժողովրդավարական որակը վատթարացավ
3. Ըստ «Ժողովրդավարության բազմերանգություն» կազմակերպության հետաքննության, ժողովրդավարության տասնամյա առաջընթացի տեսանկյունից Վրաստանն աշխարհի լավագույն տասնյակում է
4. Ժողովրդավարության ինդեքս (Վիքիպեդիա)
5. Ժողովրդավարություն (Ընթերցանության նյութ), Տես հավելված էջ. 4-11.

Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Որտե՞ղ է դասվում Վրաստանը ժողովրդավարական երկրների վարկանիշների տարբեր աղյուսակներում: Ինչպե՞ս կբացատրես տարբեր հորիզոնականների առկայությունը: • Ըստ նշված աղբյուրների՝ ժողովրդավարական ո՞ր սկզբունքներն են լիովին պաշտպանված Վրաստանում: • Ըստ նշված աղբյուրների՝ ժողովրդավարական ո՞ր սկզբունքներն են մասամբ պաշտպանված Վրաստանում: • Ըստ տվյալ աղբյուրների՝ ժողովրդավարության ո՞ր սկզբունքներն ընդհանրապես պաշտպանված չեն Վրաստանում:

Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս հիմնավորեմ, թե ժողովրդավարական ո՞ր սկզբունքներն են լիովին պաշտպանված Վրաստանում: • Ինչպե՞ս հիմնավորեմ, թե ժողովրդավարական ո՞ր սկզբունքներն են մասամբ պաշտպանված Վրաստանում: • Ինչպե՞ս հիմնավորեմ, թե ժողովրդավարական ո՞ր սկզբունքներն ընդհանրապես պաշտպանված չեն Վրաստանում:	

III Փուլ. Համալիր առաջադրանքի շնորհանդես

Ուսուցչի հարցեր, որոնք տրվելու են աշակերտների կողմից համալիր առաջադրանքի շնորհանդեսի ընթացքում.

· Նկարագրիր, թե ինչպե՞ս է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:
· Նկարագրիր, թե ինչ ապրանք ես ստեղծել:
· Ո՞ր հարցին է առնչվել քո հանձնարարության թեման:
· Բացատրիր, թե ինչո՞ւ ես գրել հոդված: Ո՞րն էր ասելիքդ:
· Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստեղծած ապրանքն իսկապես հոդված է:
· Ըստ քեզ, ո՞ւմ պետք է հետաքրքրի քո ստեղծած համալիր առաջադրանքը և ինչո՞ւ:
· Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս:
· Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե այժմ սկսեիր աշխատել առաջադրանքի վրա:
· Կատարե՞լ ես, արդյոք, նման ձև կամ բովանդակություն ունեցող առաջադրանք:
· Ըստ քեզ, ինչո՞վ է քո ապրանքը նման և ինչո՞վ տարբեր դասընկերներիդ աշխատանքից:

Հավելված.

Ժողովրդավարություն

Ընթերցանության նյութ

3. Ժողովրդավարության հիմնական սկզբունքները. գիտնականները առանձնացնում են մի քանի հիմնարար սկզբունքներ, որոնք սահմանում են, թե որքանով է ժողովրդավարական հասարակությունը/պետությունը: Հակիրճ անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին։

I. Քաղաքացիների մասնակցությունը երկրի կառավարմանը ժողովրդավարության հիմնական սկզբունքներից է։ Ժողովրդավարական երկրի կառավարմանը մասնակցելը քաղաքացու հիմնական գործառույթն է։ Քաղաքացու ներգրավվածությունը երկրի կյանքում նույնպես նրա իրավունքն ու պարտականությունն է։ Պետության կառավարման մեջ քաղաքացու մասնակցությունն արտահայտվում է տարբեր ձևերով՝ ընտրություններին մասնակցությամբ, քվեարկությամբ, երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացների իրազեկվածությամբ, կարևոր խնդիրների քննարկմամբ, տարբեր հասարակական հավաքների կամ խաղաղ ու բողոքի ակցիաներին մասնակցությամբ, կամավորությամբ, հարկերի վճարմամբ, բողոքի ակցիաների անցկացմամբ, ստորագրահավաքով, քաղաքական գործիչներին նամակների հղմամբ, տարբեր հասարակական խմբերին և ասոցիացիաներին անդամակցությամբ և այլն... Մասնակցության թվարկված ձևերը ժողովրդավարական հասարակության մեջ մարդու դիրքը որոշելու կարևոր մեխանիզմներ են։ Երբ հասարակությունը մեկուսացված է երկրում ընթացող գործընթացներից, չեն իրականացվում իշխանության վերահսկողությունը, «վերահսկման ու հակակշիռների» համակարգի հիմնական տարրերը։ Նման դեպքում կառավարության ներկայացուցիչները և քաղաքացիական ծառայողները կարող են զգալ լիակատար ազատություն և գործել առանց սահմանափակումների՝ հօգուտ իրենց շահերի։ Իշխանության նման գործողությունը կվնասի հասարակության բարեկեցությանը և կարող է դառնալ մարդու իրավունքների ոտնահարման պատճառ։

II. Իշխանության վերահսկողություն. հասարակությունը պետք է փորձի թույլ չտալ իշխանության չարաշահում ընտրյալ անձի կամ անձանց խմբի կողմից։ Կոռուպցիան իշխանության չարաշահման ամենատարածված ձևն է։ Կոռուպցիան տեղի է ունենում, երբ կառավարության ներկայացուցիչը կամ պետական ծառայողը պետական գույքը ծախսում են անձնական նպատակներով։ Ինչպես նաեւ, երբ իշխանության ներկայացուցիչն ապօրինի է օգտագործում պաշտոնական իշխանությունը։ Կոռուպցիայից խուսափելու համար տարբեր երկրներ տարբեր ուղիներ են օգտագործում։ Այն հիմնականում վերահսկվում է քաղաքացիների, օրենսդրության և տարբեր

կառույցների կողմից։ Այս սկզբունքի կարևոր ասպեկտներից մեկը «հակակշռության և վերահսկման» ուժեղ համակարգն է։ «Հակակշռությունն ու վերահսկումը» ենթադրում են իշխանության ճյուղերի միջև սահմանադրական բաշխում։

Ժողովրդավարական պետությունում կան կենտրոնական իշխանության 3 ճյուղեր, որոնք պետք է հավասարակշռեն և վերահսկեն միմյանց.

ա) Օրենսդրական, որի գործառույթը երկրում հիմնական օրենսդրական բազայի ստեղծումն է։ Կան միապալատ և երկպալատ խորհրդարաններ։ Երկպալատ խորհրդարանում, որպես կանոն, վերին պալատը ձևավորվում է մեծամասնական կարգով, այսինքն՝ մարզերի ներկայացուցիչներով, իսկ ստորինը՝ համամասնականով, այսինքն՝ ըստ քաղաքական կուսակցությունների ցուցակների։ Այս պալատները ստուգում և հավասարակշռում են միմյանց։ Միապալատ խորհրդարանը հիմնականում ձևավորվում է կամ համամասնական կամ խառը ընտրություններով (մեծամասնականն ու համամասնականը միասին)։ Վրաստանում խորհրդարանական ընտրությունները մինչ այժմ անցկացվում էին խառը կարգով, սակայն հաջորդ ընտրությունները կանցկացվեն լրիվ համամասնական ընտրակարգով։

բ) Գործադիր, որի գործառույթը երկրում ընդունված օրենքների կիրարկումն է։ Գործադիր իշխանությունը կառավարությունն է, երբեմն՝ նաև նախագահը։ Ներկայում Վրաստանի նախագահը ընդգրկված չէ կառավարության ոչ մի ճյուղում։ Նա որոշակիորեն կրում է իշխանության բոլոր երեք ճյուղերի հավասարակշռողի և արբիտրի գործառույթը։

գ) Դատական, որի գործառույթը երկրում արդարադատության հաստատումն է։ Արդարադատությունը վարչական է (տե՛ս ենթաօրենսդրական ակտերի հետ կապված վեճերը, այն է՝ քաղաքացիների և իշխանության վեճերը, ինչպես նաև մանր իրավախախտումները), քաղաքացիական (տե՛ս քաղաքացիների միջև մասնավոր բնույթի վեճերը), քրեական (տե՛ս՝ հանցագործությունների հետ կապված գործերը) և սահմանադրական (տե՛ս օրենքների և այլ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը)։

Կառավարության վերահսկողությունը ընդդիմադիր կուսակցությունների կարևոր գործառույթներից է։

Տեղական ինքնակառավարման մակարդակով ներկայացուցչական մարմինը՝ սակրեբուլոն, իրականացնում է «ստուգում-հակակշռում» գործադիր իշխանության և մունիցիպալիտետի քաղաքապետի միջև։

Հարկ է նշել, որ իշխանության վերահսկողությունը թե՛ կենտրոնական, թե՛ տեղական մակարդակներում ընդդիմադիր կուսակցությունների կարեւոր գործառույթներից է։

Ժողովրդավարական քաղաքական համակարգի սահմանած վերահսկողության այս մեխանիզմներից բացի, կան նաև վերահսկողության ոչ պաշտոնական միջոցներ։ Զանգվածային լրատվության միջոցները, որոնք լուսաբանում են իշխանության բոլոր երեք ճյուղերի գործունեությունը, վերահսկում են նրանց (այդ պատճառով էլ լրատվամիջոցները ոչ պաշտոնապես կոչվում են «իշխանության չորրորդ ճյուղ»)։ Կառավարության վերահսկողության տեսանկյունից մեծ նշանակություն ունի նաև քաղաքացիական հասարակության գործունեությունը (հասարակական կազմակերպությունների, արհմիությունների, նախաձեռնող խմբերի, շարքային քաղաքացիների կողմից)։

III. Օրենքի գերակայություն. ժողովրդավարական հասարակությունում ո՛չ թագավորը, ո՛չ էլ ժողովրդի կողմից ընտրված նախագահը չեն կարող օրենքից վեր կանգնել։ Սա է օրենքի ուժը, ինչը նշանակում է, որ պետության քաղաքացիները պետք է ենթարկվեն օրենքին և պատասխան տան օրենքի առաջ այն խախտելու դեպքում։ Ժողովրդավարական սկզբունքները պահանջում են նաև, որ բոլորը հավասար լինեն օրենքի առաջ։ Այսպիսով, օրենքի գերակայությունն այն է, որ ոչ ոք օրենքից վեր չէ։ Բոլորը պարտավոր են հետևել օրենքին և հավասար պատասխանատվություն կրել օրենքի խախտման դեպքում։

Օրենքի գերակայությունն ընդգծելը նշանակում է, որ խոսքը ժողովրդավարական պետության օրենքի մասին է, որն ընդունված է կոնսենսուսով (քաղաքացիական հասարակության լայն մասնակցությամբ դրա քննարկմանը և ընդունմանը) և դրական, արդար օրենք է։ Բնականաբար, կան նաև ոչ ժողովրդավարական, անարդար, ճնշող օրենքներ, բայց դրանք ոչ ժողովրդավարական պետությունների համար են։ Զարմանալի չէ, որ մարդիկ փորձում են չենթարկվել նման վատ օրենքներին, իսկ նրանք, ովքեր ենթարկվում են, պարզապես վախենում են։

Ժողովրդավարական հասարակության մեջ օրինապաշտ մարդիկ, բարձր պետական գիտակցությամբ, ենթարկվում են օրենքներին և փորձում են չխախտել դրանք, ոչ միայն նրա համար, որ վախենում են պատժից, այլ՝ գիտակցում են օրենքի էությունը։ Չէ՞ որ օրենքը ստեղծվել է, որպեսզի հասարակական կյանքում կարգ ու կանոն լինի և խախտելով օրենքը՝ մենք փաստացիորեն խախտում ենք հենց այդ կարգը, առաջացնում անկարգություններ և խնդիրներ մեր համաքաղաքացիների, հասարակության և պետության համար։

Օրինակ, երբ լուսացույցը կարմիր է, ես պետք է կանգնեցնեմ մեքենան ոչ միայն այն պատճառով, որ պարեկն ինձ տուգանելու է, այլ առաջին հերթին, որ կարմիր լույսի տակ անցնելով խախտում եմ երթևեկության կարգը, վտանգավոր իրավիճակ ստեղծում իմ և

ուրիշների համար, ինչը կարող է հանգեցնել դժբախտ պատահարի, վնասել մարդկանց առողջությանն ու վտանգել կյանքը: Հետևելով այս պարզ օրենքին՝ մենք հոգում ենք միմյանց անվտանգության, առողջության և բարեկեցության մասին:

Մենք կգտնենք բազմաթիվ փաստեր, որոնք կապացուցեն, որ ժողովրդավարական երկրներում անգամ ամենաբարձր պաշտոններ զբաղեցրած մարդկանց հանցանքը չի ներվել և նրանք համարժեք պատժվել են, ինչը վկայում է, որ ոչ ոք չի կարող վեր կանգնել օրենքից: Օրինակ՝ Փարիզի դատարանը Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիին երեք տարվա ազատազրկման է դատապարտել: Նա մեղավոր է ճանաչվել ազդեցության չարաշահման և կոռուպցիայի համար: Ըստ հետաքննության՝ Ֆրանսիայի նախկին նախագահը դատավորից տեղեկություն է խնդրել իր դեմ ընթացող հակակոռուպցիոն հետաքննության մասին՝ առաջարկելով բարձր վարձատրվող աշխատանք Մոնակոյում:

Սլովենիայի նախկին վարչապետ Յանեշ Յանշան, ով մեղադրվում էր կոռուպցիայի մեջ, բանտարկվել է: 2013 թվականի հունիսին դատարանը հիմնավոր է համարել, որ 2006 թվականին նա ազդել է Սլովենիայի բանակին ֆիննական ռազմական տեխնիկա մատակարարելու մրցույթի արդյունքների վրա: 280 միլիոն դոլար արժողությամբ գործարքում աջակցության դիմաց Յանշան ֆիննական «Պատրիա» ընկերությունից 2 միլիոն եվրո է պահանջել:

Ճապոնիայի վարչապետ Տանական 2 միլիոն դոլար կաշառք է ընդունել ամերիկյան «Lockheed» ընկերությունից՝ իր երկրի կողմից Lockheed-ից ինքնաթիռներ գնելու դիմաց: 1983 թվականին դատարանը նրան մեղավոր է ճանաչել կոռուպցիայի մեջ: Նա դատապարտվել է 4 տարվա ազատազրկման և տուգանքի (500 մլն իեն):

Հետաքրքիր օրինակ է նաև, այսպես կոչված, ԱՄՆ-ում Ուոթերգեյթի սկանդալը, որի պատճառով նախագահ Ռիչարդ Նիքսոնը հրաժարական տվեց: Նա հաստատ կբանտարկվեր, եթե հաջորդ նախագահը ներում չշնորհեր:

IV. Մարդու իրավունքների պաշտպանություն՝ մարդու իրավունքներ. սրանք արժեքներ են, որոնք արտահայտում են հարգանք մարդու կյանքի և արժանապատվության նկատմամբ: Այսինքն՝ եթե որեւէ իրավունք արգելվում է, մարդու կյանքին կամ արժանապատվությանը վտանգ է սպառնում: Մարդու իրավունքների օրինակներն են՝ խոսքի ազատությունը, հավաքների ազատությունը, առողջության պահպանման իրավունքը, հավասարության իրավունքը, կրթության իրավունքը և այլն: Ժողովրդավարական համակարգում կարևոր են յուրաքանչյուր մարդու կյանքն ու արժանապատվությունը: Իշխանությունների պարտականություններից մեկը մարդու իրավունքների պաշտպանությունն է: Կարելի է ասել, որ մարդու իրավունքների պաշտպանությունը հիմնական պատճառներից մեկն է, որի համար քաղաքացիներին պետք է պետությունը:

Ժողովրդավարական պետությունում նրա հիմնական օրենքը (Սահմանադրությունը) պարտադիր ներառում է մարդու իրավունքներին նվիրված բաժին, որտեղ թվարկված են պետության քաղաքացիներին երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Նրա շնորհիվ իրականացվում է պետության կողմից իրավունքի չարաշահումից քաղաքացիների պաշտպանությունը:

Բացի կոնկրետ պետության օրենքներից, մարդու իրավունքները պաշտպանված են նաև միջազգային նշանակության փաստաթղթերով, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Երեխաների իրավունքների կոնվենցիան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան: Վերջինս կազմում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմքը, որը հայտնի է որպես «Ստրասբուրգյան դատարան»:

V. Հավասարություն. Ժողովրդավարական հասարակությունը մեծ նշանակություն է տալիս հավասարության սկզբունքին: Սա նշանակում է, որ բոլոր քաղաքացիները հավասարապես արժեքավոր են: Յուրաքանչյուր ոք պետք է ունենա հավասար հնարավորություններ և արդարադատության իրավունքներ, պետք է բացառվի խտրականությունն անկախ ռասայական, կրոնական, սեռի (գենդերային), էթնիկական և այլ տարբերություններից: Ժողովրդավարական երկրներում յուրաքանչյուր մարդ և մարդկանց խմբեր իրավունք ունեն պաշտպանելու իրենց մշակույթը, հավատքը, ինքնությունը, լեզուն:

Հավասարությունը ժամանակակից ժողովրդավարական պետության անհրաժեշտ տարրն է: Այն մարդու բարեկեցության նախապայմանն է, քանի որ առանց նրա տնտեսական և քաղաքական զարգացումն անհնար է: Եթե յուրաքանչյուր մարդ չունենա հասարակական կյանքով զբաղվելու, ստեղծագործելու, պետական պաշտոն զբաղեցնելու հավասար հնարավորություն, ապա հասարակությունը կկորցնի շատ ռեսուրսներ և հնարավորություններ՝ պայքարի մշտական ռեժիմում գտնվելով:

Օրինակ, հնարավոր չէր, որ Ալեքսանդր Դյուման գրող դառնար ու կերտեր գրական այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Երեք հրացանակիրները», «Կոմս Մոնտե Քրիստոն» և այլն, եթե նրան աքսորեին և վաճառեին ստրկության՝ ելնելով մաշկի գույնից: Աշխարհը կկորցներ ռոքի ամբողջ դարաշրջանը, եթե Ֆրեդի Մերկուրին անտեսվեր հասարակության կողմից և ստեղծագործական գործընթացը խոչընդոտվեր ազգության կամ սեռական կողմնորոշման պատճառով: Սպորտային աշխարհը մեծապես կտուժեր, եթե հասարակությունը սահմանափակեր Պելեի, Մայքլ Ջորդանի, Կոբի Բրայանտի, Թայգեր Վուդսի կամ Ուսեյն Բոլթիի գործունեությունը,

թույլ չտալով դրսևորել սեփական տաղանդը մաշկի գույնի, իսկ Նոնա Գափրինդաշվիլիին, Դեբ Ուիլյամսին կամ Միա Համմին՝ սեռի պատճառով:

Հավասարություն հասկացությունն ուղղակիորեն կապված է խտրականության արգելման հետ: Խտրականությունը մարդկանց նկատմամբ անհավասար և անարդար վերաբերմունքն է՝ հիմնված որևէ հատկանիշի վրա, որը չունի օբյեկտիվ հիմնավորում: Հարկ է նաև նշել, որ ոչ բոլոր մոտեցումներն են համարվում խտրականություն: Օրինակ՝ կույր մարդուն վարորդական իրավունքի վկայական չտալն ամենևին անհավասարության կամ խտրականության դրսևորում չէ, քանի որ այս դեպքում ակնհայտ օբյեկտիվ հիմնավորում կա:Երբ Միասնական ազգային քննությունների ծրագրում ներդրվեցին Բրայլի թեստերը, խտրականության երանգը վերացավ, քանի որ տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ ակնհայտ տուժում էին կրթության իրենց իրավունքի տեսանկյունից:

VI. Ազատ, արդար ընտրություններ և դրանց արդյունքների ճանաչում. Ընտրություններին քաղաքացիների մասնակցությունը ժողովրդի կամքն արտահայտելու միջոցներից մեկն է: Ժողովրդավարական սկզբունքները պահանջում են, որ ժողովրդի ընտրված ներկայացուցիչներն ընտրվեն կամ վերընտրվեն ազատ և արդար ընթացակարգերով: Ընտրողներին վախեցնելը, կաշառելը կամ սպառնալը ընտրություններից առաջ կամ ընթացքում դեմ է ժողովրդավարության սկզբունքներին: Այս սկզբունքների խախտումն իրենից ներկայացնում է թեկնածուների/քաղաքական ուժերի կողմից ընտրողներին նյութական օգուտի հատուցում կամ խոստում՝ ձայնի դիմաց:

Ժողովրդավարական ընտրությունները պահանջում են ընտրական վարչակազմի թափանցիկ, անկողմնակալ, արդար և օբյեկտիվ աշխատանք և բացառում են ընտրական մանիպուլյացիաներն ու ընտրակեղծիքի ցանկացած մեթոդ:

Ժողովրդավարական հասարակությունում ընտրություններն անցկացվում են պարբերաբար՝ ժամանակի որոշակի ընդհատումով: Ընտրություններին մասնակցությունը չպետք է պայմանավորված լինի ընտրողի առողջական վիճակով (օրինակ՝ հիվանդ ընտրողների համար կա այսպես կոչված «դուրս բերման արկղ»), ֆինանսական վիճակից: Ընտրություններին քաղաքացիների մասնակցությանը պետք է ոչինչ չխոչընդոտի:

Ազատ, արդար ընտրություններ անցկացնելու համար քաղաքացիների մեծամասնությանը պետք է հնարավորություն տրվի ներկայացնելու սեփական թեկնածությունը: Ոչ ոք չպետք է խանգարի քաղաքացիներին մասնակցել քվեարկությանը.

Ժողովրդավարական ընտրությունները գաղտնի են: Ոչ ոք իրավունք չունի ընտրողից պահանջել, որ բարձրաձայնի, թե ում օգտին է քվեարկել, ընտրատեղամասը ստեղծվում է (թաքնված քվեախցիկ, քվեաթերթիկի ծրար) հենց այդ նպատակով, որպեսզի պաշտպանի ընտրողին իր որոշման բացահայտումից: Ժողովրդավարական երկրներում ապահովվում է ներառական ընտրական համակարգ (օրինակ՝ կույր մարդկանց համար հնարավոր է քվեարկել բրայլյան տառերով տպված քվեաթերթիկներով, հատուկ ձևանմուշներով/մատրիցաներով, սենսորային վահանակներով կամ վստահելի անձի օգնությամբ և նախընտրական ծրագրերի աուդիո տարբերակներով՝ հարմարեցված վերջիններիս համար):

Այսպիսով, կանոնավոր, ազատ և արդար ընտրությունները կարևոր են քաղաքական առաջնորդներին պատասխանատվության ենթարկելու տեսանկյունից այն քաղաքացիների համար, ովքեր ընտրում են իրենց և, ում նրանք ծառայելու են հետագայում: Ազատ և արդար ընտրությունների բաղադրիչը նաև այն է, որ հասարակության անդամները հնարավորություն ունենան ընտրվելու և նշանակվելու հանրային ծառայության: Այս գործընթացը նվազեցնում է հարուստների և իշխող դասակարգի իշխանությունը:

Ժողովրդավարական ընտրություններում կան և՛ հաղթողներ, և՛ պարտվողներ: Ժողովրդավարական սկզբունքները պարտվողներից պահանջում են ընդունել ընտրություններում պարտությունը: Պարտվողները հաճախ համարում են, որ իրենց թեկնածուն լավագույնն է և դժվարանում են ընդունել ընտրությունների արդյունքները: Ընտրությունների չճանաչումը կարող է հանգեցնել բռնության, ինչը հակասում է ժողովրդավարական սկզբունքներին: Ուստի քաղաքական բարձր մշակույթի դրսեւորում է, երբ ժողովրդավարական ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո, պարտված թեկնածուն առաջինն է շնորհավորում է հաղթողին:

VII. Հանդուրժողականություն. Ընդհանրապես, հանդուրժողականությունը հարգանք է, կարեկցանք, համբերություն, բարյացակամություն տարբերվող մարդկանց նկատմամբ, ինչպես նաև նրանց հետ հաշտության պատրաստակամություն և առանց կոնֆլիկտների հարաբերություններ: Սա նշանակում է ընդունել մարդկանց այնպիսին, ինչպիսին նրանք կան՝ անկախ լեզվական, ազգային, մշակութային, կրոնական, քաղաքական, սոցիալական, սեռային կամ այլ տեսակի պատկանելությունից կամ տարբերակիչ հատկանիշներից: Հանդուրժողականության հակառակ կողմը մարդկանց անհանդուրժողականությունն է այս կամ այն տարբերության պատճառով:

Գոյություն ունի նաև քաղաքական հանդուրժողականություն: Ժողովրդավար հասարակությունը քաղաքականապես հանդուրժող է: Սա նշանակում է, որ թեև իշխանության ղեկը գտնվում է մեծամասնության ձեռքում, անթույլատրելի է փոքրամասնությունների իրավունքների ոտնահարում: Մարդիկ, ովքեր իշխանության մեջ չեն, պետք է կարողանան ստեղծել իրենց կազմակերպությունները և առաջ տանել իրենց սկզբունքները: Երբեմն փոքրամասնություններին անվանում են «ընդդիմություն», քանի որ նրանք չեն կիսում մեծամասնության տեսակետներն ու սկզբունքները: Անհատները նույնպես պետք է կարողանան միմյանց հետ հանդուրժող հարաբերություններ ունենալ:

Ժողովրդավարական հասարակությունը բաղկացած է տարբեր մշակույթներից, ռասաներից, կրոններից, էթնիկ խմբերից, որոնց հայացքները տարբերվում են բնակչության մեծամասնությունից: Բազմազանությունը ժողովրդավարության բնորոշ հատկանիշներից մեկն է: Բազմակարծությունը ամրապնդում է ժողովրդավարական հասարակությունը: Եթե մեծամասնությունը չի ցանկանում և չի պաշտպանում փոքրամասնության իրավունքները, ապա ժողովրդավարության զարգացումը խոչընդոտվում է:

VIII. <u>Իշխանության թափանցիկություն.</u> Նրա համար, որպեսզի իշխանությունը հաշվետու լինի իր քաղաքացիներին, բնակչությունը պետք է իմանա, թե ինչ գործընթացներ են տեղի ունենում երկրում: Ժողովրդավարության այս սկզբունքը կոչվում է կառավարման թափանցիկություն: Կառավարության որոշումների մասին բնակչությունը տեղեկանում է հիմնականում լրատվամիջոցների միջոցով: Բացի այդ, թափանցիկ և բաց կառավարությունը կազմակերպում է հանրային հանդիպումներ, որոնց մասնակցում են շարքային քաղաքացիներ: Պետական կառույցներն ունեն նաև կայքէջեր, որտեղ տեղադրում են հանրային տեղեկատվություն իրենց գործունեության, իրականացրած, ընթացիկ և ապագա ծրագրերի,

նյութական միջոցների ծախսման մասին: Ելնելով այն հանգամանքից, որ լրատվամիջոցներն այսօր մեծ ազդեցություն ունեն հասարակական կարծիքի ձևավորման վրա, նրանք ոչ պաշտոնապես անվանվում են «չորրորդ իշխանություն» («իշխանության չորրորդ ճյուղ»):

IX. Բազմակուսակցական համակարգ. Պատմությունը ապացուցել է, որ միակուսակցական համակարգը տանում է դեպի բռնապետություն: Բազմակուսակցական համակարգը քաղաքացիներին հնարավորություն է տալիս ընտրել թեկնածուներ, կուսակցություններ և ռազմավարություններ, որոնք կնպաստեն հասարակության զարգացմանը: Բազմակուսակցականությունը նպաստում է նաև կառավարությունում քննարկվող թեմաների վերաբերյալ տարբեր տեսակետների առկայությանը, ինչպես նաև իշխող կուսակցությանը ընդդիմադիր ուժ ձեւավորելու հնարավորությանը:

X. <u>Տնտեսական ազատություն.</u> Ժողովրդավարական հասարակության մեջ մարդկանց պետք է տրվի տնտեսական ազատություն: Սա նշանակում է, որ մասնավոր սեփականությունը, մասնավոր ձեռներեցությունը պաշտպանված են, քաղաքացիները կարող են ընտրել իրենց աշխատանքը և անդամակցել արհմիություններին: Ինչ վերաբերում է պետության դերին հասարակության տնտեսական կյանքում, ապա կա երկու հիմնական կարծիք: Մարդկանց մեծ մասը համաձայն է, որ ժողովրդավարական երկրում տնտեսության լավագույն ձևը ազատ շուկան է: Պետությունը չպետք է ամբողջությամբ վերահսկի տնտեսությունը: Այնուամենայնիվ, ոմանք կարծում են, որ պետությունը պետք է ավելի շատ միջամտի տնտեսությանը, հատկապես այն երկրներում, որտեղ առկա է ունեցվածքի մեծ անհավասարություն՝ հասարակության մեջ խտրականության և այլ անարդար գործողությունների պատճառով:

Այսպիսով, ժողովրդավարական համակարգում ընդհանուր առմամբ, ընդունված է, որ կառավարությունը թույլ տա մասնավոր սեփականության, բիզնեսի և աշխատանքի ազատ ընտրություն: Իշխանության կողմից տնտեսության կարգավորման որակը տարբերվում է ըստ երկրների:

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N4- Վրաստանում քաղաքացիություն ստանալու և ապրելու օրինական հնարավորություններ (X ԴԱՍԱՐԱՆ)

ԹԵՄԱ. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈԲԱԼ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ			
Համալիր առաջադրանք (անվանում)	Թիրախային հասկացություն և ենթահասկացություններ	Թեմա	Հանգուցային հարց
Գրել նամակ եվրոպացի հասակակցին՝ Վրաստանի քաղաքացիության շնորհման, ինչպես նաև Վրաստանում օտարերկրացու օրինական ապրելու հնարավորության վերաբերյալ	Ժողովրդավարություն. քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները Վրաստանի քաղաքացիության մասին օրգանական օրենք Օրենք՝ օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին	Վրաստանում քաղաքացիություն ստանալու և ապրելու օրինական հնարավորություններ	Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ նամակում Վրաստանի քաղաքացիության շնորհման հնարավորությունները, ինչպես նաև Վրաստանում օտարերկրացու օրինական բնակության հնարավորությունը
Երկարաժամկետ նպատակ Թիրախային հասկացություն և դրանով պայմանավորված կից հասկացություններ	Հարց/ենթահարցեր. Վրաստանում քաղաքացիություն ստանալու և օրինաբար ապրելու հնարավորություններ Ենթահասկացություններ. Քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները Վրաստանի քաղաքացիության մասին օրգանական օրենք	Հանգուղային հարց / հարցեր Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ նամակում Վրաստանի քաղաքացիության շնորհման հնարավորությունները, ինչպես նաև Վրաստանում օտարերկրացու օրինական բնակության հնարավորությունը	Միջանկյալ ուսումնական նպատակ Համալիր առաջադրանքի պայման

	Օրենք՝ օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին		
Ժողովրդավարություն (մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարության սկզբունքներ) Արդյունքներ. Միջին մակարդակ 3, 4, 13. 1. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, 2. Անձն ունի քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կոլեկտիվ իրավունքներ. Վրաստանի Սահմանադրությունը և միջազգային փաստաթղթերը (հռչակագրեր, կոնվենցիաներ) ապահովում են այդ իրավունքների պաշտպանությունը: 3. Ժողովրդավարական հասարակության/պետության մեջ մարդու իրավունքները ամենակարեւոր արժեքն են: 4. Ժողովրդավարությունը հիմնված է հիմնարար սկզբունքների վրա (հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, իշխանությունների բաժանում, արդար ընտրություններ, պատասխանատվություն,	I Փուլ. Համալիր առաջադրանքի ձևաչափ Քայլ 1. Ինչպե՞ս պետք է ցույց տամ իմ գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Դաս 1. • Ռեսուրս. **պ**ատրաստվող ապրանքի՝ նամակ գրելու նշանակությունը Ինչպե՞ս գրենք նամակ • <u>Նամակի նմուշ</u> ինչպե՞ս գրենք գործնական նամակ		Պատկերացրու, որ նամակ ես ստացել եվրոպացի հասակակցից: Նա Վրաստանում էր փոխանակման ծրագրի շրջանակներում, հիացավ քո երկրով և նրան հետաքրքրում է, թե ինչ հնարավորություններ կան Վրաստանի քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև օտարերկրացու՝ այստեղ օրինական/լեգալ ապրելու համար: Ուսումնասիրիր համապատասխան նյութը և դրա հիման վրա պատասխան նամակ գրիր քո հասակակցին: Նամակը/այն ներկայացնելու ժամանակ հստակ ներկայացրու. • Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ է սահմանում Վրաստանն իր քաղաքացիներին (Կ.Պ. 1, 2, 3): • Ինչո՞վ են տարբերվում Վրաստանի քաղաքացիների և այստեղ բնակվող ոչ քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները (Կ.Պ. 1, 2, 3): • Որքանո՞վ է համապատասխանում ժողովրդավարական սկզբունքներին քաղաքացիության և բնակության իրավունքի տրամադրման վերաբերյալ Վրաստանի գործող օրենսդրությունը (Կ.Պ. 4):
	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Արդյո՞ք, գրել կամ ստացել ես նամակ: • Ի՞նչ տպավորություն թողեց նամակը քեզ վրա:	
	Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս գրեմ նամակ: • Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ նամակ գրելու համար: • Ինչպե՞ս ընդգծեմ նամակի կառուցվածքն ու բնութագրերը (ողջունում, բանալի բառեր, հիմնական մաս, հրաժեշտ)	
	I I Փուլ՝ Համալիր առաջադրանքի բովանդակությունը Քայլ 1. Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ է սահմանում Վրաստանն իր քաղաքացիներին (Կ.**Պ.** 1, 2, 3): Ինչո՞վ են տարբերվում Վրաստանի քաղաքացիների և այստեղ ապրող ոչ քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները (Կ.**Պ.** 1, 2, 3): Որքանո՞վ է Վրաստանի քաղաքացիության և բնակության իրավունքի տրամադրման վերաբերյալ գործող օրենսդրությունը համապատասխանում ժողովրդավարական սկզբունքներին (Կ.**Պ.** 4): Ռեսուրսներ.		

ներառականություն, ոչ բռնի գործողություն, հանդուրժողականություն), առանց որոնց պաշտպանության ժողովրդավարական պետությունը չի կարող գործել:	1. Դպրոցական դասագիրք, X դասարան, «Դիոգենե» հրատարակչություն, էջ. 20-28, 2. Օրգանական օրենք Վրաստանի քաղաքացիության մասին (Հոդված 3, 7, 8, 12, 13, 14, 16, 17, 22, 26, 27), 3. Օրենք՝ օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին (Հոդված 5, 7, 10, 11, 14, 15, 16, 18, 20, 21, 25, 26, 35, 42, 44, 70), 4. Վրաստանի Սահմանադրություն (Գլուխ Երկրորդ. Քաղաքացու հիմնական իրավունքները, Հոդվածներ 9-35, ինչպես նաև Հոդված 67.1, 70.2, 76.5); 5. Սովորական կարգով Վրաստանի քաղաքացիության շնորհում		
	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Ի՞նչ իրավունքներ, ազատություններ և պարտավորություններ է սահմանում Վրաստանի օրենսդրությունը Վրաստանի քաղաքացիների համար: • Ի՞նչ իրավունքներ, ազատություններ և պարտավորություններ է սահմանում Վրաստանի օրենսդրությունը օտարերկրյա քաղաքացիների համար: • Որքանո՞վ են Վրաստանի քաղաքացիության և բնակության մասին օրենքները համապատասխանում ժողովրդավարական սկզբունքներին:	
	Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս կարող են օտարերկրյա պետությունների քաղաքացիները ստանալ Վրաստանի քաղաքացիություն: Ի՞նչ մեխանիզմներ է նախատեսում Վրաստանի օրենսդրությունն այդ ուղղությամբ: • Ինչպե՞ս կարող են օտարերկրյա պետությունների քաղաքացիները օրինականորեն մուտք գործել և ապրել Վրաստանում: Վրաստանի	

		օրենսդրությունը ի՞նչ մեխանիզմներ է նախատեսում այդ ուղղությամբ:	
	III Փուլ. Համալիր առաջադրանքի շնորհանդես Ուսուցչի հարցեր, որոնք տրվելու են աշակերտների կողմից համալիր առաջադրանքի շնորհանդեսի ընթացքում. • Նկարագրիր, թե ինչպե՞ս է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: • Նկարագրիր, թե ինչ ապրանք ես ստեղծել: • Ո՞ր հարցին է առնչվել քո հանձնարարության թեման: • Բացատրիր, թե ինչո՞ւ ես գրել նամակ: Ո՞րն էր ասելիքդ: • Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստեղծած ապրանքն իսկապես նամակ է: • Ըստ քեզ, ո՞ւմ պետք է հետաքրքրի քո ստեղծած համալիր առաջադրանքը և ինչո՞ւ: • Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: • Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե այժմ սկսեիր աշխատել առաջադրանքի վրա: • Կատարե՞լ ես, արդյոք, նման ձև կամ բովանդակություն ունեցող առաջադրանք: • Ըստ քեզ, ինչո՞վ է քո ապրանքը նման և ինչո՞վ տարբեր դասընկերներիդ աշխատանքից:		

ՀԱՄԱԼԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ N5- Պատերազմական հանցագործություն (XI ԴԱՍԱՐԱՆ)

ԹԵՄԱ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ			
Համալիր աշխատանք (անվանում)	Թիրախային հասկացություն և ենթահասկացություններ	Խնդիր	Հանգուցային հարց
Մեղադրական եզրակացության պատրաստում՝ ռազմական հանցագործություններ կատարած անձի կողմից մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի խախտումը ցույց տալու նպատակով	Ժողովրդավարություն մարդու իրավունքներ, միջազգային մարդասիրական իրավունք, հանդուրժողականություն, ոչ բռնի գործողություն	Պատերազմական հանցագործություն	Ինչպե՞ս ներկայացնեմ մեղադրական եզրակացության մեջ ռազմական հանցագործի կողմից մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները
Երկարաժամկետ նպատակ Թիրախային հասկացություններ և դրանցով պայմանավորված կից պատկերացումներ	Հարց/Ենթահարցեր պատերազմական հանցագործություն Ենթահասկացություններ. Մարդու իրավունքներ, Միջազգային մարդասիրական իրավունք, Հանդուրժողականություն, ոչ բռնի գործողություն	Հանգուցային հարց / Հարցեր Ինչպե՞ս ներկայացնեմ մեղադրական եզրակացության մեջ ռազմական հանցագործի կողմից մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները	Միջանկյալ ուսումնական նպատակ Համալիր առաջադրանքի պայման
Ժողովրդավարություն (մարդու իրավունքներ, իրավական փաստաթղթեր, ժողովրդավարական սկզբունքներ) Արդյունքներ. Միջին մակարդակ 1, 2, 3, 4. 1. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով,	I Փուլ՝ Համալիր առաջադրանքի ձևաչափ Քայլ 1. Ինչպե՞ս պետք է դրսևորեմ իմ գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Դաս 1. Ռեսուրս. • Կազմվող ապրանքի՝ մեղադրական եզրակացության կարևորությունը: Մեղադրական եզրակացություն. • Քաղվածք՝ Քրեական դատավարության օրենսգրքից • Մեղադրական եզրակացության նմուշ		Ինչպես հայտնի է, 2023 թվականի մարտի 17-ին Միջազգային քրեական դատարանը, որը գտնվում է Հաագայում, դատապարտել է Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինին և նրան ձերբակալելու հրաման արձակել: Պուտինը մեղադրվում է ռազմական հանցագործությունների մեջ: Պատկերացրու, որ Հաագայի դատարանի դատախազն ես, և քեզ

2. Անձն ունի քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կոլեկտիվ իրավունքներ. Վրաստանի Սահմանադրությունը և միջազգային փաստաթղթերը (հռչակագրեր, կոնվենցիաներ) ապահովում են այդ իրավունքների պաշտպանությունը: 3. Ժողովրդավարական հասարակության/պետության մեջ մարդու իրավունքները ամենակարեւոր արժեքն են: 4. Ժողովրդավարությունը հիմնված է հիմնարար սկզբունքների վրա (հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, իշխանությունների բաժանում, արդար ընտրություններ, պատասխանատվություն, ներառականություն, ոչ բռնի գործողություն, հանդուրժողականություն), առանց որոնց պաշտպանության ժողովրդավարական պետությունը չի կարող գործել:	Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Կարդացե՞լ ես, արդյոք, մեղադրական եզրակացություն: • Ի՞նչ տպավորություն թողեց քո վրա մեղադրական եզրակացությունը:	հանձնարարված է Պուտինի դեմ մեղադրական եզրակացություն կազմել: Ուսումնասիրիր տրված նյութը և դրա հիման վրա պատրաստիր մեղադրական եզրակացություն:
	Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս կազմեմ մեղադրական եզրակացություն: • Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ մեղադրական եզրակացություն ստեղծելու համար (ընթերցեք ուսումնական նյութը): • Ինչպե՞ս ընդգծեմ մեղադրական եզրակացության առանձնահատկությունները (կազմեմ պլան, առանձնացնեմ բանալի բառերը, ներածությունը, նկարագրական-մոտիվացիոն մասը և հանգուցալուծումը):	Մեղադրական եզրակացության շնորհանդեսի ժամանակ հստակ ներկայացրու. • Ինչպե՞ս են ոտնահարվում մարդու իրավունքները Ուկրաինայում պատերազմի բռնկումից հետո (Կ.Պ 1, 2, 3); • Ինչպե՞ս է խախտվում միջազգային մարդասիրական իրավունքը Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի դեմ զինված հարձակումից հետո (Կ.Պ 2): • Պատերազմական իրավիճակում որքանո՞վ են պահպանվում ժողովրդավարական սկզբունքները (ոչ բռնի գործողություն, հանդուրժողականություն) (Կ.Պ. 4):
	II Փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակություն Քայլ 1. Ինչպե՞ս են ոտնահարվում մարդու իրավունքները Ուկրաինայում պատերազմի բռնկումից հետո (Կ.Պ 1, 2, 3); Ինչպե՞ս է խախտվում միջազգային մարդասիրական իրավունքը Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի դեմ զինված հարձակումից հետո (Կ.Պ 2): Ռեսուրսներ. 1. Դպրոցական դասագիրք. XI դասարան, «Դիոգենե» հրատարակչություն, էջ. 160 2. Հաագայի դատարանը Պուտինին ձերբակալելու հրաման է արձակել 3. Միջազգային մարդասիրական իրավունք (պատերազմի օրենք) 4. Միջազգային քրեական դատարան 5. Տեղեկություններ Ռադովան Կարաջիչի մասին 6. Ռադովան Կարաջիչ 7. Ռազմական հանցագործություններ՝ Ռուսաստանի կողմից Ուկրաինա ներխուժելու ժամանակ		

Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Ի՞նչ գիտես միջազգային մարդասիրական իրավունքի մասին: Ի՞նչ ես լսել Հաագայի դատարանի մասին: • Ինչո՞ւ Հաագայի դատարանը Պուտինին կալանավորելու հրաման արձակեց: • Մարդու ո՞ր իրավունքներն են խախտվել Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի Ուկրաինա ներխուժումից հետո: • Միջազգային մարդասիրական իրավունքի ո՞ր սկզբունքներն է խախտել Ռուսաստանի Դաշնությունը Ուկրաինայի դեմ ագրեսիվ պատերազմի ժամանակ: • Ինչո՞ւ պատժվեց Սերբիայի Հանրապետության նախագահ Կարաջիչը: • Այլ ո՞ր պետական և ռազմական գործիչների մասին եք լսել, ովքեր մահապատժի են ենթարկվել ռազմական հանցագործություններ կատարելու համար:	
Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ի՞նչ մեխանիզմներ է նախատեսում միջազգային հանրությունը պատերազմական հանցագործներին պատժելու համար: • Ինչպե՞ս է հնարավոր քաղաքական անձին քրեական պատասխանատվության ենթարկել ռազմական հանցագործությունների համար:	

Քայլ 2. Որքանո՞վ են պահպանվում ժողովրդավարական սկզբունքները (ոչ բռնի գործունեություն, հանդուրժողականություն) պատերազմական իրավիճակում (Կ.**Պ.** 4):

Ռեսուրսներ**.**

1. Հանդուրժողականություն

2. Ոչ բռնի

Հարցեր՝ ուղղված դեկլարատիվ և պայմանական գիտելիքներին	• Ո՞րն է Ուկրաինայում պատերազմի արդյունքում հանդուրժողականության և ոչ բռնի գործողությունների սկզբունքների խախտումը:
Հարցեր՝ ուղղված ընթացակարգային գիտելիքներին	• Ինչպե՞ս կարող եմ հիմնավորել Ուկրաինայում շարունակվող պատերազմի ժամանակ ժողովրդավարական սկզբունքների խախտման իրողությունը (գործել ոչ բռնի մեթոդներով, հանդուրժողականություն):

III Փուլ. Համալիր առաջադրանքի շնորհանդես

Ուսուցչի հարցեր, որոնք տրվելու են աշակերտների կողմից համալիր առաջադրանքի շնորհանդեսի ընթացքում.

· Նկարագրիր, թե ինչպե՞ս է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:
· Նկարագրիր, թե ինչ ապրանք ես ստեղծել:
· Ո՞ր հարցին է առնչվել քո հանձնարարության թեման:
· Բացատրիր, թե ինչո՞ւ ես գրել մեղադրական եզրակացություն: Ո՞րն էր ասելիքդ:
· Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստեղծած ապրանքն իսկապես մեղադրական եզրակացություն է:
· Ըստ քեզ, ո՞ւմ պետք է հետաքրքրի քո ստեղծած համալիր առաջադրանքը և ինչո՞ւ:
· Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս:
· Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե այժմ սկսեիր աշխատել առաջադրանքի վրա:
· Կատարե՞լ ես, արդյոք, նման ձև կամ բովանդակություն ունեցող առաջադրանք:
· Ըստ քեզ, ինչո՞վ է քո ապրանքը նման և ինչո՞վ տարբեր դասընկերներիդ աշխատանքից: